ԿԱՐԾԻՔ

Կարեն Հովհաննեսի Հովյաննիսյանի «Թուխ Մանուկ սրբավայրերը (պատմաազգագրական ուսումնասիրություն)» Է.00.04. - «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Կարեն Հովհաննեսի Հովյաննիսյանի ատենախոսությունը նվիրված է ամբողջական ուսումնասիրության կարոտ «Թուխ Մանուկ սրբավայրերի» պատմաազգագրական ուսումնասիրությանը: Ատենախոսությունը ընդգրկում է հիմնախնդրի վերաբերյալ հարցերի լայն շրջանակ, որոնց ուսումնասիրությունն ու վերլուծությունը կարևոր ներդրում կլինի հայ ազգաբանական գիտության մեջ: Ի պատիվ ատենախոսի, այդ խնդիրը նրան լիովին հաջողվել է: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք ծավալուն գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից, ընդհանուր ծավալով՝ 250 էջից:

Առաջին գլխում, որ կրում է «Թուխ Մանուկ սրբավայրերի պատմական հիշատակությունները» վերնագիրը, մեկնաբանվում է մինչև 19-րդ դարի 2-րդ կեսը սրբավայրերին վերաբերող հիշատակությունները, պատմամշակութային դրսևորումները 19-րդ դարի 2-րդ կեսից մինչև 20-րդ դարի 1-ին քառորդը և Թուխ Մանուկ սրբավայրերի տարածվածության աշխարհագրությունը պատմական Հայաստանի տարածքում:

Երկրորդ գլուխը կրում է «Թուխ Մանուկ սրբավայրերի պաշտամունքը» խորագիրը: Այստեղ քննարկվում են սրբավայրերի գործառույթները և ձևերը՝ մատաղի ծիսակարգը, սրբավայրի բժշկական զորությունը, զավակ պարգևելու և խնամքի, զինվորի պաշտամունքի, մուրազի կատարման, պտղաբերության ապահովման, սիրահարների հովանավորի զորավոր ունակությունների, ջրի պաշտամունքի և արհեստավորական միությունների հովանավորության հետ առնչվող երևույթները:

Երրորդ գլուխը նվիրված է սրբավայրորի հետ կապված հավատալիքային և բանահյուսության ժանրային դրսևորումներին:

Ներկայացված ատենախոսությունը լիովին հաջողված աշխատանք է, գրված է ժամանակակից ազգաբանական գիտական մեթոդների և սկզբունքների, հարուստ սկզբնաղբյուրների և գրականության հիման վրա: Օգտագործված է 350 սկզբնաղբյուր և գրականություն: Բավական է ասել, որ աշխատանքում օգտագործվել է շուրջ երեք ու կես տասնյակ օտար լեզուներով գրականություն: Աշխատանքը շատ շահեկան է դարձել ազգագրական դաշտային հարուստ նյութերի, մատենագրական հարուստ տեղեկությունների, մամուլի, գեղարվեստական գրականության և այլ աղբյուրների օգտագործման հիման վրա: Ուշագրավ է նաև մի այլ բացառիկ կարևոր կողմ. աշխատանքը ունի ծավալուն հավելված, որում առանձին բաժնով ներկայացված է Թուխ Մանուկ սրբավայրերի գտնվելու ցանկը՝ պատմական Հայաստանի 2 հատվածներում ըստ պատմաազգագրական շրջանների, ինչպես նաև սրբության կերպարի, ուխտագնացության օրերի, ծիսական արարողությունների ու գործառույթների: Հավելվածի 2-րդ մասում ներկայացված է «Թուխ Մանուկը բանահյուսական սկզբնաղբյուրներում», որը գերազանցապես հեղինակի և գիտաշրջավի մյուս մասնակիցների գրառած դաշտային ազգագրական նյութերն են: Գրեթե ամբողջ նյութը նորույթ է և բանահյուսական շատ կարևոր սկզբնաղբյուր: Առավել քան արժեքավոր է նաև հավելվածի Թուխ Մանուկ սրբավայրի վերաբերյալ արված լուսանկարների ցանկը: Հեղինակը ընտրել է լուսանկարների այնպիսի չափ, որով հնարավոր լինի ընդգրկել հնարավորինս ամբողջությամբ սրբավայրերը:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը ամբիոնը անհրաժեշտ է համարում ընդգծել հետևյալ նկատառումները և վրիպակները.

1. Աշխատության աղբյուրագիտական հենքը կազմող դաշտային ազգագրական նյութերը(ԴԱՆ) հղված է գիտաշրջավների անձնակազմի անվամբ, որտեղ չի առանձնացված ատենախոսի կատարած ինքնուրույն աշխատանքը, նրա գրած նյութը: Գրականության ցանկում և ծանոթագրություններում հիշատակված է ԴԱՆ-ի 106 հիշատակություն՝ Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան և այլք: Ամբիոնի կարծիքով ճիշտ կլիներ, որ հիշատակվեր ատենախոսի նախ սեփական գրի առած նյութերի չափը, ընդգրկած ծավալը, ցանկը և ապա՝ միյուսների: Չենք գտնում համատեղ ներկայացնելու որևէ բացատրություն:

2. Ամբիոնը գտնում է, որ խառնիուռն է ներկայացված ատենախոսության գլուխների խորագրերը: Այսպես 2-րդ գլուխը վերնագրված է Թուխ Մանուկ

սրբավայրերի պաշտամունքը, մինչդեռ 1-ին գլխի 2-րդ ենթագլուխը նույնպես պաշտամունքային հարցերին է վերաբերում, կարելի էր միասին մեկ գլխի շրջանակներում ներկայացնել:

3. 2-րդ գլխի 2-րդ ենթագլխի ենթահարցերը չեն բխում մեկը մյուսից, ներկայացված են անկանոն: Կարծում ենք ավելի ճիշտ կլիներ տալ հետևյալ կառուցվածքը. 1. Մատաղի ծիսակարգ, 2. Սրբավայրը սիրահարների հովանավոր, 3. Պտղաբերության հովանավոր, 4.Մուրազի իրականացնող, 5. Ջավակատվությունը և երեխաների խնամքը ապահովող, 6. Բժշկելու զորությունը, 7.Սրբավայրը գինվորի պաշտպան, 8.Սրբավայրի հետ աղերսվող ջրի պաշտամունքի դրսևորումները, 9. Թուխ Մանուկ սրբավայրն և արհեստավորական միությունները:

4. 3-րդ գլխի 3-րդ ենթագլուխը վերաբերում է սրբավայրի ուխտագնացություններին, նույնպիսի վերնագիր է կրում 2-րդ գլխի 1-ին ենթագլուխը, մեր կարծիքով դրանք պետք է ներկայացվեն մեկ գլխի ներքո:

5. Աղբյուրներից մի քանիսը նշելիս չի հիշատակված պարբերականների համարները և էջերը:

6. Ինչ կարիք կա Գ. Բաղալյանի մեկ աշխատությունը ներկայացնել 8 առանձին հիշատակություններով, դրանք պետք է միավորված ներկայացվեին մեկ հղմամբ ՎԷՄ-ի համարները միավորելով:

7. Աշխատությունը կարիք ունի լուրջ խմբագրման և սրբագրման:

Այնուհանդերձ, նշվածը ամենևին չի նսեմացնում կատարված վիտխարի աշխատանքը: Դրանց մի մասը ցանկալի կլիներ հաշվի առնվեր հրատարակելու ժամանակ:

Իմի բերելով վերն ասվածը, կարող ենք եզրակացնել, որ Կարեն Հովհաննեսի Հովյաննիսյանը ներկայացրել է բավական հասուն, գիտական լուրջ արժեք ունեցող ատենախոսական աշխատանք: ՈՒստի աներկբա կարող ենք հավաստել, որ Կարեն Հովհաննեսի Հովյաննիսյանի «Թուխ Մանուկ սրբավայրերը (պատմաազգագրական ուսումնասիրություն)» վերնագրով Է. 00.04. «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմամբ պաշտպանության ներկայացված ատենախոսությունը լիովին համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը միանգամայն արժանի է հայցվող աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Հ. Գ. Ավետիսյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար, պ.գ.թ. Լ.Ս. Հովսեփյան